

تَنْبِيْهُاؤُو

مَجَلَّةٌ جَمْعِيَّةٌ الْقَاهِرَةُ الْخَيْرِيَّةُ الْأَرْمِينِيَّةُ الْعَامَّةُ

# ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՏԻՐԷԻ Հ.Բ.ԸՄՈՒԹԱՆԸ

للدير المسئول: أ. صاروخان - ١٥ شارع عماد الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص.ب. ٧١٧

ԺԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 7 - 9

ՅՈՒԼԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ 1971



Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ ու հայ թարգմանիչները:

Բայց մենք կանք նորից, կա՛յ երկիրը մեր,  
Անոյշ հնջում ե մեր Հայոց լեզուն,  
Նորից կերտում ենք շքեղ կտրողներ,  
Հայրենաբարբառ երգեր ենք հիստում:

ՍԱՐՄԷՆ

## Ա Ձ Դ

- Տեղեկատուան առ այժմ կը հրատարակուի պարբերաբար:
- Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու, թերթերու եւ հանդէսներու առարուսները կատարել խմբագրութեանս հասցէին.

Խմբագրութիւն «ՏԵՂԵԿԱՏՈՒ»ի  
15, Էմատ Էլ Տիւն փողոց - Գահիրէ  
Հեռ.ախօս 919636 - Նամակատուփ 717

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

- 1— Մասնոցական
- 2— Բարձրահաննար զինագործ Մեսրոպ Մասոց
- 3— Միւս կենսունակ Բարեգործականը
- 4— Մելգոնեան կրթական հաստատութիւն
- 5— Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1970-71ի երջանաւարտները
- 6— Հայաստանի Հանրապետութեան բնակչութիւնը
- 7— Անապառ արցունք (Պարոյր Սեւակի յիշատակին)
- 8— Յուշերեկոյ՝ նուիրուած Պարոյր Սեւակի
- 9— Հ. Բ. Ը. Միութենէն ներս պարզեաւոր մրցանք
- 10— Կարսինալ Աղանանեան վախճանած
- 11— Ողբ. Գլխադիր Թաւանեանի յիշատակին
- 12— Հրաիրագիր Ընդհանուր Ժողովի

# التبليغ

مجلة جمعية القاهرة الخيرية الأزمنية العامة

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՃԻՐԷԻ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵԼՆ

للدبر المسئول : ا. صاره خان - ١٥ شارع عماد الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص.ب. ٧١٧

ԺԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 7 - 9

ՅՈՒԼԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ 1971

## Մ Ա Շ Տ Ո Յ Ա Կ Ա Ն

Ժ.Ա.Գ. ՅԱԿՈԲԱՆ

Ո՛ւր լուներ է, ո՛ւր, որ ժայռը խոսքան  
 Ծնանի շուշան,  
 Ո՛ւր գուներ է, ո՛ւր, որ հողն անջրդի՝  
 Մեղրագն՝ բխի.  
 Եւ ո՛ւր է խօսուեր, որ քառք սեւ  
 Յղանայ արեւ.  
 Եւ ո՛ւր է կարդացուեր, որ յանկարծ փոխուի  
 Լուռքիսն՝ երգի՝  
 Եւ ո՛վ է պատկեր. ո՛վ աշխարհ, ո՛վ դար,  
 Որ գուղձը խաւար,  
 Որ կանն անկենդանի դառնայ վառ հողի  
 Եւ արժեք ոսկի,  
 Բացի հրաշքներու Գիրքէն յուսանած,  
 Չոր գրեւ է Ասուած՝  
 Ծունչով երկնածին, ձեռքով մարդկային,  
 Աշխարհի չափ հի՛ն:

Հին մասնանկն դուրս՝ կայ սակայն ուրիշ  
 Հրա՛ջ մ՛այ գրուած օր մը անգրիշ:  
 Ո՛չ քարի վրայ՝ որ կ'ըլլայ փոշի,  
 Ո՛չ մագաղաթի՝ որ կը բորբոսի,  
 Ո՛չ բուղթի վրայ՝ որ կը մոխրանայ  
 Եւ ո՛չ աւագի  
 Չոր հովը կ'երնէ մոռացումն ի վար,  
 Ննան երագի:

Փխրուն եւ անշունչ նիւթը չի կրնար  
 Հրա՛ջը բանեւ,  
 Երգը կաշկանդէ:  
 Այլ հարկ է հողի՝  
 Որ տե՛ւ հրա՛ջն ու երգը սարի՝  
 Անպրոպին դիմաց՝ ժայռը կը փշրի  
 Եւ կռակին սակ՝ աղաւա՛նդն անգամ,  
 Կը տկայ սակայն Հոգին Հայկական,  
 Քանի որ անոր վրայ է գրուած  
 Հրա՛ջ մեարդանան,  
 - Գրած է Ասուած...  
 Քանդակուած է ան, հրա՛ջն անխնաց,  
 Ապաւածի վրան՝  
 Որուն անունն է Երկիր Նայիրի:  
 Եւ փորուած է ան  
 Աղաւանդի վրան՝  
 Որ Հայ ժողովուրդի սնունդ ունի:  
 Ոսկին անննսն՝ մշակոյթը հայ,  
 Որուն ծանրութիւնը չի կշռուիր  
 Ոսկիով անգամ...

« ՀԱՅԱՍՏՐՈՓ » Հասրեկն:

# ԲԱՐՁՐԱՀԱՆՃԱՐ ԶԻՆԱԳՈՐԾ Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Ց

Ստորագելին փոխ կ'առնեմ վաղամե-  
ռիկ գրագէտ Եղուարդ Պօյաճեանէն: Այո՛,  
զինագո՛րծ, և բարձրահանճար զինագործ:  
Եւ իր յօրինած, հնարած զէնքը — հայկա-  
կան այրուբէնը — գերահզօր զէնք մը,  
աւելի մեծ քան այսօրուան ու վաղուան  
կորիզային կամ ջրածնային զէնքերը. . . :

Ժողովուրդ մը չի ծնիր մարդ-մանուկին  
նման, սաղմանալով միայն մէկ արգանդի  
մէջ և աշխարհ գալով միայն մէկ մօրմէ,  
ու մէկ անգամ: Ժողովուրդը կը կազմուի,  
գարեբու ընթացքին՝ անհատներու, ընտա-  
նիքներու և ցեղերու միաւորումով: Բայց,  
ժողովուրդը ազգ կը դառնայ, ուրոյն հա-  
ւատքով և գիմազծով ուրոյն կեանքով  
ու ճակատագրով և կը դառնայ անխոր-  
տակելի, անջնջելի, անկորնչելի ա՛յն ատեն  
միայն՝ երբ կը ստեղծէ ինքն իրեն համար  
մեծագոյն ազգակը, կամ կը տիրանայ  
անոր, երկունքով, պայքարով, պարտու-  
թիւններով և յաղթանակներով: Եւ այդ  
ազգակը կը կոչուի Դպրութիւն կամ Մշա-  
կոյթ: Վերստին կամ իրական, յաւերժա-  
կան ծնունդ:

Անողջ գուպարներով ստեղծուած այդ  
մշակոյթը, իր կարգին, կը դառնայ պաշտ-  
պան վահանը՝ ազգին կեանքին ու ապա-  
գային պահպանման:

Այս պաշտպան վահանի հիմն ու կեդ-  
րոնական սիւնը եղող գիրն ու գրականու-  
թիւնն է որ կը կոչենք գերահզօր զէնք:  
Եւ անոր հնարիչն ու հիմնադիրը՝ «ՍՈՒՐԲ»  
հռչակուած Մեսրոպը՝ բարձրահանճար զի-  
նագործ:

\* \*

Ի՞նչ էր Հայաստանը, ի՞նչ էր Հայու-  
թիւնը երրորդ դարէն ետք, երբ մեծ ար-  
շաւանքներէն, բարբարոս զանգուածներու  
աւերներէն յետոյ, բաժան բաժան եղած  
էր արեւելքի և արեւմուտքի միջեւ, բա-  
ժան բաժան ապրելու համար նաեւ ներք-

նապէս՝ նահանգէ նահանգ, նախարարու-  
թենէ նախարարութիւն:

Ի զո՛ւր Տրդատ Գ. (298-330), Պապ  
(368-374) հայ Արշակունեաց առաքելու-  
թիւնը շարունակեցին՝ միասնականութիւնը  
վերահաստատելու համար, եթէ երբ եւ է  
եղած էր ատիկա: Պարսկա-բիւզանդական  
անվերջ բախումներու ժամանակ՝ Հայաս-  
տանի շէն քաղաքներն էին աւերուողները  
հայ ժողովուրդն էր առաւելագոյն ջարդը-  
ւողը: Ու խաղաղութիւն հաստատուած օրն  
ա՛յ ծանր տուրքերը եւ հարստահարու-  
թիւնն էին կրկին՝ մեր դժբախտ եւ արի  
ազգին բաժինը:

Հռոմայական աշխարհակալութեան  
արեւելեան թեւի՝ Բիւզանդիոնի և Պարս-  
կաստանի մէջ տիրող Սասանեաններու  
կռիւը դադրեցաւ չորրորդ դարուն: 387  
թուականին անոնք Հայաստանը երկուքի  
կիսեցին ու այնտեղ հաստատեցին իրենց  
բռնատիրութիւնը:

303 թուականին հայերը ընդունեցին  
իր ժամանակին համար յառաջդիմական  
սեպուղ քրիստոնէական կրօնքը և ատով՝  
թշնամի էին դարձնել խաւարակուռ հեթա-  
նոսութեան և խաւարակիր կռապաշտու-  
թեան: Հակառակ կրօնակից ըլլալուն, Բիւ-  
զանդիոն ջնջեց իր բաժնի Հայաստանին  
պետականութիւնը և ազգային կեանքը:  
Մեր եկեղեցիներն ու վանքերը ինկան յոյն  
կղերականներու ազդեցութեան տակ: Ու-  
սումը կը կատարուէր յունարէնով: Հազիւ  
թէ կը հանդուրժէին ասորերէնին, որ մեր  
գործածած երկրորդ լեզուն էր մշակոյթի  
մարզին մէջ, հելլենականէն ետք: Ոսկեղ-  
նիկ հայերէնը, Գողթան երգիչներու օրէն  
մեղի հասած, լքուելու և մոռցուելու գա-  
տապարտուած էր:

Պարսկական բաժինին մէջ, Սասան-  
եանները հանդուրժեցին պահել հարկատու  
թագաւորութիւն մը հայոց համար, յաճախ

պարսիկ ծագումով: Հանդուրժեցին պահել նաև մեր կրօնքը: Բայց մեր լեզուն այնտեղ ալ դատապարտուած էր՝ տխուր ճակատագրի: Ասորերէնը, ապա քիչ քիչ՝ պարսկերէնը տեղ կը գրաւէր, և հայերէնը կը կորանցընէր կենդանի և ընթացիկ լեզու ըլլալու իր հանգամանքը:

Մութ էր հայ ժողովուրդի ապագան: Զաւթիչներու ծրագիրը, Հայաստանը իսկապէս ջնջելու և ժողովուրդը իրենց մէջ ձուլելու ծրագիրը մտած էր յաջողութեան ճամբուն մէջ:

ՅՅՅ թուին, Տարօնի Հացեկաց գիւղին մէջ ծնած, և իբրեւ զինուորական ու արքունի քարտուղար հռչակ հանած, ապա կրօնաւոր վարդապետ Մեսրոպ Մաշտոց, քառասնամեայ լուսամիտ և սոկեսիրտ մէկ հայ գործիչ՝ կը տեսնէ այն անդունդը, որուն ի վայր սկսած էր գլորիլ հայ ժողովուրդը: Եւ կը մտածէ դարմանին մասին:

Բովանդակ Հայոց Պատմութիւնը լեցուն էր պատերազմներով: Հայերը, զօրաւոր և միացեալ բանակ՝ ունեցած ատենն իսկ հազիւ թէ կրցած էին պահպանել իրենց սահմանները կամ լեռնային ապաստանարանները: Իսկ հիմա որ ոսոխները սկսած էին ազգը ուտել մշակոյթի ու կեանք-կենցաղի ճամբով, ի՞նչ էր հարկաւոր՝ ճողոպրելու համար այս վտանգէն ալ:

Անկախութիւն: Ջնջուած էր հայոց անկախութիւնը գերակշիռ ոյժերու ճնշումին առջեւ: Բայց կար սգեկան, մշակոյթի անկախութիւն մը, զոր կարելի էր իրականացնել խաղաղ ճամբով, ուղեղով, և որ շատ աւելի տոկուն, դիմացկուն և անխորտակելի էր՝ նոյնիսկ նիւթական հզօրագոյն գրոհներու դէմ:

Անշուշտ Մեսրոպ միակ կղերականը չէր այս գիտակցութեան հասնողը: Եկեղեցականներն էին Հայաստանի մէջ ժողովուրդին ուսում և կրթութիւն ջամբողները: Եւ ուսումը ընդհանրապէս կրօնական խորքով էր տրուած: Ուսանողութիւնը դժուարութեան մէջ էր օտար լեզուով ուսանելու հարցին մէջ: Ու եկեղեցականները միշտ բերանացի՝ հայերէնի կը թարգմանէին աւանդուած նիւթերը: Եւ ասիկա հիմնաւոր գործ մը չէր հանդիսանար:

Չորրորդ դարու վերջին տարիներուն հայոց Վրամշապուհ թագաւորը այցելած էր Միջագետք, և այնտեղ Հարէլ անուն հայ քահանայ մը յայտնած էր իրեն, թէ Դանիէլ անուն ասորիի մը մօտ հայկական հին նշանագրեր կային: Թագաւորը Հայաստան վերադարձին տեսաւ որ Մեսրոպ Մաշտոց գլխած է Սահակ Պարթեւ կաթողիկոսին՝ հայերէն նշանագրեր ունենալու անբաժնելիութեան խնդրով, և անոնք կ'ուսումնասիրէին կարելիութիւնները:

Յետ խորհրդակցութեան, Վահրիճ անուն զինուորական մը կը զրկուի Միջագետք և կը բերուին Դանիէլի մօտ գտնուող հայկական նշանագրերը, որոնց համար բանասէրները կ'ըսեն թէ ձեւափոխուած փրկանիկեան հին նշանագրեր էին:

Փորձը չի յաջողիր: Դանիէլի նշանագրերը չէին համապատասխաներ հայ լեզուի հնչական պահանջներուն: Հետեւաբար, Վրամշապուհ և Սահակ Պարթեւ կ'արտօնեն Մեսրոպ Մաշտոցը որ կրկին մեկնի Միջագետք, հայ նշանագրեր գտնելու առաքելութեամբ:

Մեսրոպ կը մեկնի՝ իր հետ առնելով ընտիր աշակերտներու խումբ մը, որոնցմէ մէկ մասը կը ձգէ Եդեսիա՝ որ սորվին ասորական դպրութիւն, իսկ միւս մասն ալ կը զրկէ Սամոսատ, որ հելլենական դպրութիւն ուսանին: Ինք կը մնայ Եդեսիա, և հո՛ս է որ կը յօրինուին հայ նշանագրերը՝ 404 թուականին:

Մեսրոպ, իր յօրինած այբուբէնի 36 նշանագրերը առած՝ կ'ընթաց Սամոսատ, Հռուփանոս գեղապիրին մօտ զանոնք գեղեցիկ ձեւով օժտելու: Եւ կը յաջողի:

Վաղարշապատը ցնծութեամբ կը դիմաւորէ Մեսրոպն ու իր շքախումբը: Եւ անմիջապէս, Հայաստանի հոգեւորականութիւնը, Սահակի և Մեսրոպի առաջնորդութեամբ, կը ձեռնարկէ նոր այբուբէնը սորվեցնելու ժողովուրդին, և միաժամանակ կը ձեռնարկուի Աստուածաշունչի թարգմանութեան: Թարգմանուած առաջին տողն է՝ Սողոմոնի Առակաց գիրքէն, — «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել

զգարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, եւ ուղղեալ զիրաւունս»:(\*)

Սահակ Պարթեւ իմաստուն և դիւանագէտ Կաթողիկոս էր ու սիրուեցաւ թէ՛ Տիգրանէն և թէ՛ Բիւզանդիոնէն: Վրամշակունի հեզահամբոյր և շինարար թագաւոր մը եղաւ ու կրցաւ հաւասարակշռութիւն պահել տիրող ոյժին հետ: Այս կացութեան շնորհիւ, Մեսրոպ կրցաւ դպրոցներ բանալ թէ՛ պարսկական և թէ՛ յունական բաժնի Հայաստանին մէջ, ամենուրեք, և տարածել — միշտ Աստուածաշունչի ուսուցման ճամբով — հայ գիրն ու դպրութիւնը: Ու հասաւ տաղանդաւոր սերունդ:

Մեզի ծանօթ է հինգերորդ դարը Ոսկեդար յորջորջումով: Ասիկա կը պարտինք Մեսրոպի կատարած գիւտին, որուն շնորհիւ, հոյլ մը գիտնական հոգեւորականներու աշխատանքով, գրուեցան անստգիւտ երկեր և կատարուեցան տիեզերական թարգմանութիւններ:

Արիստոտել, Պլատոն, Զենոն, Եւսեբիոս Կեսարացի, Փիլոն Աղեքսանդրացի և այլն, ունեցան իրենց բնագիրներէն աւելի ուժեղ թարգմանութիւններ ի հայս:

Թարգմանիչները կոչուեցան «Սուրբ Թարգմանիչներ», և մենք ունեցանք Կորինթի «Վարք Մաշտոցի», Եզնիկի «Եղծ Աղանդոց», Փաւստոսի, Փարպեցիի, Ագաթանգեղոսի և Խորենացիի «Հայոց Պատմութիւն»ները, Եղիշէի «Վարդանանց Պատերազմը, Անանիա Շիրակացիի գրական հեղինակութիւնները:

Հինգերորդ դարուն, համաշխարհային մտքի արտագրութիւններէն հայերէնի թարգմանուած են այնպիսի երկեր, որոնց բնագիրները կորսուած են և հայերէն թարգմանութեանց միջոցով է որ յոյն, լատին և այլ ժողովուրդներ վերստին ունեցած են մեծ գրողներուն գործերը:

# Մ Ի Շ Տ Կ Ե Ն Ս Ո Ւ Ն Ա Կ Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ը

Սխալ կամ աւելորդ բան մը ըսած չենք ըլլար, երբ անգամ մը եւս հաստատենք, թէ Հայ Բարեգործական Ընդհ. Միութիւնը իր իրագործած աշխատանքով նախախնամական և ազգօգուտ դեր մը ունեցաւ — և ցարգ ունի — հայկական կեանքէն ներս:

Շնորհիւ իր հիմնադիրներուն ինքնաժտան քայլերուն, ու շնորհիւ մանաւանդ հայ ժողովուրդին ունեցած անվերապահ վստահութեան՝ հանդէպ նոյն այս մեծանուն հիմնադիրներուն, Բարեգործականը ժամանակի ընթացքին ամրացաւ,

Մեր պատմիչներու և յիշատակագիրներու վկայութիւններէն կը տեղեկանանք որ այնուհետեւ, դարերու ընթացքին, մինչեւ 1915, ահաւոր փոթորիկներ, աւերածութիւն և ջարդ տեղի ունեցան հայկական բարձրաւանդակի բոլոր կողմերը: Բայց որովհետեւ կա՛ր ու կը մնար Մեսրոպը իր հանճարագեղ գրահով, իր այբուբէնով, մենք չկտրանք ու ապրեցանք: Եւ 1920ին, երբ վերջ գտաւ Մեսրոպի զէնքին պաշտպանողական հանգամանքը՝ սուրին ու հուրին դէմ, ան անցաւ յառաջդիմութեան և ստեղծագործութեան մարզը՝ շնորհիւ մեր Սոսիալիստական Սովետական Հանրապետութեան ուր, 1962ին աննախընթաց չուքով, և մասնակցութեամբ ամբողջ աշխարհի հայութեան ու եղբայր ժողովուրդներու ներկայացուցիչներուն, տօնուեցաւ Մեսրոպ Մաշտոցի 1600-ամեակը: Տպուեցան գիրքեր անհամար, գրուեցան երգեր բարձրորակ և յորինուեցան արուեստի գործեր՝ ի պատիւ Մեսրոպին ու ներշնչուած Մեսրոպէն: Եւ ասիկա՝ իբրև տպացոյց այն ճշմարտութեան, թէ հայ ազգը, իր արութեամբ և առաքինութեամբ արժանի է իր բարձրահանճար զինագործ զաւկին ու անոր բերած յանկարծական, դիւցազնական քերածուռնաղնս:

(\*) «Իմաստութիւնը եւ խրատը գիտնայ, հանճարին խօսքերը հասկնայ, խօսքերուն իմաստութեան հաղորդուիլ, պահել հիւսիսը արդարապէս է և պարտաւոր իրանոսները»:

ուռճացաւ և արդիւնաւորեց, հասնելով այժմու փայլուն դիրքին:

Այս միութիւնը, իր հիմնադրութեան թուականէն սկսեալ ցայսօր, մօտ վաթսուներհինգ տարիներ հասաւ ազգին ամէն տեսակ կարիքներուն, օրուայ պահանջքին համեմատ տրամագրելով իր նիւթական և բարոյական կարելութիւնները:

Բարեգործականը, իր հիմնադրութեան տարին իսկ (1906) իր օգնութիւնը փութացուց կովկասի աղէտեալներուն ու Հայաստանի սովեալներուն:

Օսմանեան Սահմանադրութեան հաստատումէն անմիջապէս ետք (1908), շքնորհիւ ստեղծուած ազատութեան, Բարեգործականը իր մասնաճիւղերը հաստատեց հայաբնակ զանազան քաղաքներու մէջ, ու իր գործունէութիւնը և նպաստները կեդրոնացուց թուրքիոյ սահմաններէն ներս, օգնելով մասնաւորապէս գաւառաբնակ աղքատ հայրենակիցներուն անոնց տրամադրելով սերմնացու, լծկան կենդանիներ, գործիքներ, զգեստեղէններ, ու բանալով վարժարաններ, արհեստանոցներ, որբանոցներ, ուսուցանոց մը և այլ հանրային հաստատութիւններ:

Ապրիլ 24ի աղէտը իր չարաշուք հետեանքներով, հիմէն սարսեց թրքահայ ժողովուրդը: 1914էն 18-ի շրջանը, տասնեակ հազարաւոր ազգակիցներու ջարդով կամ սովահար մահուամբ, հալածանքներով, թալանով և աւերով միացած՝ գլեցանցաւ մարդկային ամէն երեւակայութիւն: Այս շրջանին ալ ու աւելի ետքը մանաւանդ, Բարեգործականը տենդագին գործունէութեան մը լծուցաւ, իր փրկարար օգնութիւնը հասցնելու համար աղէտահար ազգակիցներուն, որոնք տնաքանդ ու անտէր՝ ապաստանած էին Արաբիոյ տաբաստանները և որոնք նոյնպէս ցաւատանջ ու սովահար վերջաւորութիւն մը պիտի ունինային, եթէ Բարեգործականը ու բարեսիրական այլ կազմակերպութիւններ օգնութեան չհասնէին:

Մեծ է Հ.Բ.Լ. Միութեան օժանդակութիւնը թրքահայ ժողովուրդին վերականգնումի աշխատանքին մէջ: Սկիզբը, մայր հողին վրայ ու մանաւորապէս ի Կիլիկիա,

ու յետոյ — երբ քեմալական բանակի յառաջխաղացումին պատճառաւ Կիլիկեան պարպուեցաւ հայութենէն — արտասահմանեան գաղութներու մէջ, մասնաւորապէս ի Յունաստան, Սուրիա, Լիբանան, Եգիպտոս և այլուր Բարեգործականը ճիշդ չինայից իր օժանդակութիւնը բերելու նորեկ գաղթականներուն:

Չենք ուզեր թուանշաններով խօսիլ, բայց կ'ուզենք յիշատակել միայն սա մանրամասնութիւնները, թէ Գահիրէի մէջ միայն, այդ օրերուն, հանգանակութեան և նախաճաշարումի համար Բարեգործականը հաւատեց տարագրեալներու Հիմնադրամ մը, Հանդերձարանի Հիմնադրամ մը, Աղէտեալներուն Հիմնադրամ մը: Ան կազմակերպեց նաեւ արշաւ մը նոր անգամներու արձանագրութեան կամ հին անգամներու կրկնապատկումին:

Նմանօրինակ ձեռնարկներ արդիւնաւորուեցան նաեւ այլ մասնաճիւղերու կողմէ, Մ. Նահանգներ, Եւրոպա, դիմադրուելու համար ժողովուրդի անմիջական կարիքներուն:

Նոյն օրերուն էր, որ Բարեգործականի Կեդրոնը կ'որոշէր օժանդակել Հայաստանի նորակազմ Հանրապետութեան սահմաններուն մէջ գտնուող հայերուն աւելի Հայրենիքը սեղմուած էր աւերի և սուրի ընդմէջէն, ուր սովը և հիւանդութիւնները կը տիրապետէին:

Բարեգործականի պաշտօնաթերթը՝ «Միութիւն»ը, իր 1921-ի Յուլիս-Օգոստոս թիւերուն մէջ կը յայտարարէր թէ, Կեդրոնը Սորհրդային Հայաստանի պետական կաշի մին հետ բանակցութեան մէջ մտած էր, օժանդակելու համար հայրենաբնակ կարօտ ժողովուրդին: Ու յաջորդ թիւին մէջ իսկ պաշտօնաթերթը կը յայտարարէր թէ, Կեդրոնը 1000 Անգլ. Ոսկի արժողութեամբ պարէն և հանդերձեղէն զրկելու ձեռնարկած էր: Քանի մը ամիս ետք, 1000 Անգլ. Ոսկիի Չրդ յատկացում մը կ'ըլլար սերմընցու և դեղօրայք հայթայթելու համար Հայաստանին:

Իզմիրի աղէտին ալ, — իր այս օրերուն կը պատահէր — Բարեգործականը իր նպաստը հասցոյց տուցաւ:

# ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

## ԸՆԴՈՒՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. — Մեղգոնեան Կրթական Հաստատութիւն կ'ընդունուին, մուտքի քննութեանէ ետք, որպէս գիշերօթիկ, կամ ցերեկեայ, ուսման ընդունակութիւն ունեցող սան-սանուհիներ, որոնք պիտի ըլլան առաւելագոյն 13 տարեկան և հայ նախակրթարանէ մը շրջանաւարտ:

2. — Թեկնածուները իրենց դիմումը կը կտտարեն Հ. Բ. Ը. Միութեան տեղական մարմին, իսկ անոր չգոյութեան պարագային՝ Հաստատութեան Տնօրէնութեան:

3. — Ամէն թեկնածու պարտի մասնաւոր դիմումնագիր մը լեցնել և մինչեւ Յուլիս 1 անոր հետ զրկել նաեւ հետեւեալ պաշտօնաթուղթերը. —

ա. — Ծննդեան պաշտօնական վկայագիր մը:

բ. — Վերջին երկու տարիներու վիճակացոյցները:

Ան ջատագովը եղաւ յատկապէս ներգաղթին ալ, և իր անմիջական ու առատածեռն օգնութիւններով իր մասնակցութիւնը բերաւ ներգաղթողներուն:

Այսօր, երբ սփիւռքահայութեան աղգային պահանջները մտահոգութիւնները տարբեր հիմնաւորումներ ունին՝ Բարեգործականը միշտ առաջին գծին վրայ կը մնայ, որպէս մեծագոյն զոհաբերութիւնները ընող՝ հայապահպանման սրբազան գործին մէջ: Հայահոծ զանազան գաղութներու մէջ, ան հաստատած է սեփական վարժարաններ ու միեւնոյն ժամանակ կ'օժանդակէ զանազան վարժարաններու: Զանազան կրթաթոշակներ, հիմնադրամներ կը մատակարարէ ու նիւթապէս կ'օժանդակէ հարիւրաւոր ուսանողներու, զարկ կուտայ հայ մամուլին, գիրքերու տպագրութեանց ծախսերը կը հոգայ, հայագիտական ամպի-

գ. — Բարի վարուց և ընդունակութեան յանձնարարագիր մը՝ տրուած վերջին վարժարանին տնօրէնին կողմէ:

Ընդունման գիր ստացող աշակերտը պարտի զրկել նաեւ,

ա. — Անցագրի 12 լուսանկարներ:

բ. — Առողջական վկայագիր մը:

գ. — Ծնողքին, խնամակալին կամ պաշտպանին կողմէ տրուած երաշխաւորագիր մը, որով յանձն կ'առնէ վճարել անհրաժեշտ ծախսերը և տէր կը կանգնի աշակերտին, երբ տարեվերջին կամ այլ անհրաժեշտ պարագաներուն կը վերագարձըւի իր բնակավայրը:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մինչեւ երեք դասի մէջ ձախող աշակերտը վերաքննութեան իրաւունք կ'ունենայ, պայմանաւ որ դասապահերութիւր 11-ը չանցնի:

2. — Վերաքննութեան մէջ երեք պահէն աւելի դասերու մէջ ձախող աշակերտը կը կրկնէ իր դասարանը:

ոններու կ'օժանդակէ, եւայլն:

Վերջին շրջանին մէջ Բարեգործականը իր աշխատանքը կեդրոնացուց մասնաւորապէս Մ. Նահանգներէ ներս հայկական ամէնօրեայ վարժարաններու ստեղծումին անմիջական կարիքին վրայ, որուն արդիւնքը եղաւ արդէն Տիթրոյթի և Մոնրէսլի վարժարաններու բացումը:

Բարեգործականը իր ետին 65 երկար տարիներու բեղուն գործունէութիւն մը ունի: Այսօր ալ, երիտասարդական նոյն խանդով ու աւիւնով ան կը շարունակէ իր առաքելութիւնը: Նոր ծրագրիներու, նոր առաջադրութիւններու իրագործումի ճամբուն մէջ է ան, միշտ յառաջապահը մընալով նմանօրինակ կազմակերպութիւններու շարքին մէջ:



3.— Ճեմարանական Բաժնէն Մասնագիտական անցնելու համար, ուսանող մը պէտք է ունենայ նուազագոյն 70 ընդհանուր միջին: Մասնագիտական Բաժնի Արուեստի և Գիտութեան ուսանողները կ'որոշուին այդ ձեւերու դասատուներուն կողմէն:

4.— Ուսանող մը Մասնագիտական Ա. դասարանէն Բ. անցնելու համար կ'ենթարկուի կարգափոխութեան ընդհանուր օրէնքներուն:

5.— Ճեմարանական Բաժնէն շրջանաւարտ ըլլալու համար պայման է անցման նիշ ունենալ բոլոր նիւթերու մէջ, իսկ կարենալ յանձնարարուելու համար՝ ունենալ նուազագոյն 70 ընդհանուր միջին:

6.— Աւարտական դասարանէն վկայուելու համար պայման է յաջողիլ բոլոր նիւթերուն մէջ, իսկ կարենալ յանձնարարուելու համար՝ ունենալ նուազագոյն 75 ընդհանուր միջին:

7.— Աւարտական դասարանի մէջ, ձախողած նիւթ ունեցող ուսանողը կրնայ վկայուիլ, եթէ նոյն տարուան Սեպտեմբերին յաջողած ըլլայ վերաքննութեանց մէջ:

8.— Ուսման ամբողջ շրջանին աշակերտ մը միայն մէկ անգամ կրնայ դասարան կրկնել:

### ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

1.— Ընդունուած թեկնածուն ինքը պարտի հոգալ երթելեկի իր ծախսը:

2.— Իրապէս աղքատ թեկնածուներ կ'ընդունուին իբր ձրիավարժ աշակերտներ պայմանաւ որ կատարեն հիմնական վըճարումը: Ա. և Բ. դասարաններու հիմնական վճարումն է 20 ոսկի (կիպր.), Գ. Դ. Ե. դասարաններունը՝ 25 ոսկի, իսկ Ա. և Բ. Մասնագիտականներունը՝ 30 ոսկի:

Ձրիավարժ աշակերտ ըլլալու և կամ լրիւ թոշակին վրայ զեղչ ապահովելու համար, արտասահմանի թեկնածուները պարտին իրենց խնդրագիրները ներկայացնել Հաստատութեան Տնօրէնութեան տեղւոյն

Հ. Բ. Ը. Միութեան գրասենեակին միջոցաւ, իսկ կիպրացի թեկնածուները կը գրմեն ուղղակի Հաստատութեան Հոգաբարձութեան:

Հաստատութիւնը կ'ընդունի նաեւ թուշակաւոր ցերեկեաններ և գիշերօթիկներ:

Հաստատութիւնը տարեկան 350 կիպրական ոսկի կը ծախսէ իւրաքանչիւր աշակերտի համար: Այս գումարը կը հասնի 500 կիպր. ոսկիի, եթէ նկատի ունենանք վարժարանին խոշոր կալուածը, շէնքերը, գոյքերը և ստացուած այլ նպաստները:

Լրիւ սակերէն աւելի եղած վճարումները կ'արձանագրուին իբր նուէր:

3.— Ձրիավարժ և վճարովի աշակերտներ մինչեւ Օգոստոս 15 պարտին վըճարել իրենց հիմնական գումարին կամ թուշակին կէսը, երթելեկի և վիզայի գումարներուն ամբողջութիւնը, ինչպէս նաեւ 4 կիպր. ոսկի՝ անձնական ծախսերու համար, որմէ պիտի գանձուի Հ. Բ. Ը. Միութեան անդամավճարը, օգակայանի տուրքը, կիպրական ինքնութեան թուղթին և օտարահպատակութեան քարզին ծախսերը՝ շուրջ մէկուկէս կիպր. ոսկի: Բոլոր աշակերտները իրենց Բ. մասնավճարը պարտին ընել մինչեւ Փետրուար 15:

4.— Իւրաքանչիւր նոր ընդունուող սանուհի իր երկու գոգնոցներուն, երկու պլուզներուն և փէշին համար մինչեւ Օգոստոս 15 պէտք է վճարէ 6 կիպր. ոսկի:

5.— Յետնեալ պարտք ունեցող և կամ Ա. մասնավճարը մինչեւ Օգոստոս 15 չվճարող սան-սանուհիները Հաստատութիւն չեն ընդունուիր:

«ՀԱՄԱՍՏԱՄԱՐՈՍ ՏԵՂԵԿԱՏՈՒ»

### ՔԱՌԵԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ կազմակերպութիւններուն՝ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆՆ և ԵՑ աջակցութեամբ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ազգից մէջ ուր կայ կարիք ՄԻՈՒԹԻՒՆՆ այնտեղ կը սփռուի բարիք:

Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ

# ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ 1970 - 1971 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՇՐՋԱՆԱԽԱՐՏՆԵՐԸ


Ուրախությամբ կը տեղեկանանք, որ 1970—71 տարեշրջանին ունեցած ենք Մելգոնեան Կրթական Հաստատության սաներեն՝ չորս շրջանաւարտներ, որոնք փայլուն յաջողությամբ աւարտած են մասնագիտական բաժնի՝ գիտական նիւղը:

«Տեղեկատու» Պարբերաբերքը ջերմօրէն կը շնորհաւորէ շրջանաւարտ մեր երիտասարդները և կը մաղթէ անոնց՝ նորանոր յաջողութիւններ:


Չորս շրջանաւարտներն են. —




ԱՐՆԳ ԱՎՏՐՈՍԵԱՆ



ԳԵՂՈՐԳ ԼԻՅՈՒՈՋԵԱՆ



ԱՐԱ ՏԵՓՈՅԵԱՆ



ԱՐՄԵՆԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ

Երեւանի հանրապետական մամուլը հրապարակել է Հայաստանի կառավարութեանն առընթեր կեդրոնական վիճակագրական վարչութեան հաղորդագրութիւնը Սովետական Հայաստանի բնակչութեան վերաբերեալ, ըստ 1970 թուականի Յունւարի 15-ի մարդահամարի:

Նախորդ մարդահամարների տուեալների համեմատութեամբ, 1970 թուականի մարդահամարի տուեալներով հանրապետութեան բնակչութեան թիւը ներկայացնում է հետեւեալ պատկերը.

Առ 15ը Յունուարի 1970 թուականի Հայկական Հանրապետութեան աւելայ բնակչութիւնը ճշգրտուած տուեալներով կազմել է ընդամենը 2.491.873 մարդ, այդ թւում 1.217.163 տղամարդ և 1.274.710 կին: Քաղաքային բնակչութեան թիւը կազմել է 1.481.532 մարդ, գիւղականը՝ 1.010.341 մարդ:

Վերջին 1959 թուականի մարդահամարից յետոյ Հայաստանի բնակչութիւնը 600 հազարով, գիւղականը՝ 129 հազարով:

Առաջին մարդահամարը Հայաստանում տեղի է ունեցել 1897 թուականին: Այդ ժամանակ բնակչութիւնը կազմել է 797 հազար 900 մարդ, այսինքն՝ մի քիչ աւելի քան այժմ ունի Սովետական Հայաստանի մայրաքաղաքը: 1913 թուականին այդ թիւը հասել է մէկ միլիոն 100 մարդու, իսկ 1926 թուականից յետոյ, գլխաւորապէս առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքով նուազել մինչև 881 հազար երեք հարիւրի:

Ներկայումս Սովետական Հայաստանում կայ երեք մեծ քաղաք, որոնց բնակչութեան թիւը սնցնում է 100 հազարից: Կրանք են հանրապետութեան մայրաքաղաք Երեւանը և Լենինականն ու Կիրովականը 1959 թուականին Երեւանն ունէր 493 հազար 500 մարդ: Լենինականը՝ 108 հազար 400 մարդ, Կիրովականը՝ 49 հազար 4 հարիւր: Ներկայումս Երեւանում բնակում է 766 հազար 700 մարդ, Լենինականում 165 հազար, Կիրովականում՝ 106 հազար

600 մարդ: Համեմատելով այս թիւերը, նկատելի է, որ Երեւանի ու Լենինականի համեմատութեամբ վերջին 11 տարում Կիրովական քաղաքը աւելի աճ է տուել: Դա բացատրում է այն փաստով, որ վերջին տասնամեակներում Կիրովականը դարձել է հանրապետութեան արդիւնաբերական կարեւորագոյն կեդրոններից մէկը: Ուստի, և նրա բնակչութիւնը աւելի քան կրկնապատկուել է:

Տարիքային կառուցուածքի տեսակէտից աւելի մեծ թիւ են կազմում 10—15 տարեկան բնակիչները՝ 388 հազար 261 մարդ, 5—9 տարեկանները՝ 53 հազար 925 մարդ և մինչև չորս տարեկանները՝ 287 հազար 965 մարդ:

1970 թուականին ամբողջ բնակչութեան մէջ տղամարդկանց տոկոսը կազմել է 48.8, կանանցը՝ 51.2: Տղամարդկանց և կանանց թուի այսպիսի յարաբերակցութիւնն ստեղծուել է աւագ տարիքների հաշուին և գլխաւորապէս պատերազմների հետեւանք է:

Տղամարդկանց և կանանց թուի տարբերութիւնն աստիճանաբար կրճատում է. 1959 թուականին ամբողջ բնակչութեան մէջ կանայք տղամարկանցից աւելի էին 78.2 հազարով, իսկ 1970 թուականին 57.5 հազարով:

Հայաստանի մայրաքաղաքում կայ 372 293 տղամարդ և 394.412 կին:

Հանրապետութիւնում 1970 թուականին ամուսնացած է եղել 927 հազար 600 տղամարդ և կին՝ 1959 թուականին 700 հազար 900-ի դիմաց:

Իւրաքանչիւր հազար տղամարդուց ամուսնացած է եղել 695ը, իսկ հազար կանանցից 643ը:

Վերցնելով անգրագիտութեան վերացման լրիւ դասընթացը Սովետական Հայաստանը վիթխարի վերելք է ապրել: Ներկայումս գրագէտ է բնակչութեան 99.8 տոկոսը:

Հայաստանում զգալիօրէն բարձրացել է բարձրագոյն կրթութեան մակարդակը:

# Ա Ն Ս Պ Ա Ռ Ա Ր Ց Ո Ւ Ն Ք

(ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

ԱՐՄԷՆ ՏԱՏՈՒՐ

Իմաստաւորուած կեանք մը անիմաստ, անաւոր կերպով շիջեցաւ յանկարծ, անգութօրէն՝ երբ կրնար գեռ երկար տարիներ հրավառիլ ու շքեղօրէն լուսաւորել հայ գրական երկնակամարը՝ այնտեղէն տիեզերական իր Միւրը մտնելէ առաջ՝ իբր Աստղ:

Մեծ մեր վիշտին հետ՝ անչափելի է հայ Մշակոյթի կորուստը:

Փշրուեցա՞ն, Պարոյր Սեւակի նիւթեղէն մարմինին հետ իրենց սաղմին մէջ այն գոհարները, գրական գլուխ գործոցները՝ որ անպայման լոյս աշխարհ պիտի գային, պիտի հարստացնէին մեր գրական գանձարանը:

Ներկայումս հանրապետութիւնում կայ բարձրագոյն և միջնակարգ (լրիւ և ոչ լրիւ) կրթութեամբ 951 հազար 3 հարիւր մարդ: 1959 թուականին այդ թիւը կազմում էր 566 հազար 9 հարիւր:

Հանրապետութիւնում ապրում են 2 միլիոն 208 հազար 327 հայեր, 148 հազար 189 ատրպեջանցիներ, 66 հազար 108 ռուսեր, 37 հազար 480 քիւրտեր, 8 հազար 390 ուզբախնացիներ, 5 հազար 690 յոյներ, 5 հազար 514 ասորիներ, 1439 վրացիներ, այլ ազգութիւնների պատկանող 10 հազար 7 հարիւր մարդ:

Մարդահամարի ժամանակ որպէս մայրենի լեզու հայոց լեզուն է նշել 2.207.860 մարդ, որից 2.203.554ը հայ է, իսկ 4306 մարդ պատկանում է այլ ազգութիւնների: Բացի դրանցից 537.825 մարդ նշել է, որ ազատօրէն տիրապետում է ռուսաց լեզւին և 49.908 մարդ՝ հայոց լեզւին, որպէս երկրորդ լեզուի:

Երեւան քաղաքում ներկայումս ապրում է 730.435 հայ, 21.519 ռուս, 3513 քիւրտ, 2691 ատրպեջանցի, 2607 ուզբախնացի, այլ ազգութեան պատկանող, 5940 մարդ:

Սիամանթոյի, Վարուժանի, Տէրեանի, Թէքէեանի և Չարենցի արժանաւոր ջահակիրն է Պարոյր Սեւակ, անոնց հարազատ շառաւիղէն քալող, երբեք՝ անոնց կրկնութիւնը, նմանը, այլ ինքնատիպ, խիզախ նորարար մը:

Անկրկնելի է Սեւակ իր քնարով և ապահոված փառքի ու սիրոյ գահը մեր մեծ Անմահներու կողքին: Խորունկ ցաւ է մեզի բսել՝ թէ գեռ սկիզբն էր ստեղծագործական իր յայնաշունչ նուաճումներուն:

Յարաբերաբար ուշ՝ 24 տարեկանին Սեւակ մտաւ գրական ասպարէզ՝ անշուք կերպով ու տուաւ մեզի 1948-ին իր աննըշան գրքոյիը՝ «Անմահները հրամայում են»: Տակաւ՝ Սեւակ գտաւ իր հրաշալի թափն ու վերելքի իր արտասովոր ճամբուն վրայ և առանց գրական հանձար մը երեւնալու, ընծայեց՝ «Անհաշտ մտերմութիւն» (1953), «Սիրոյ ճանապարհը» (1954), «Նորից քեզ հետ» (1957), «Մարդը փիլ մէջ» (1963) և ապա իր գլուխ գործոց «Անլուելի Զանգակատուն» Պոէմը (1959), վերամշակում՝ 1966-ին, երկերը: Նաև «Սայաթ Նովա» մեծարժէք մենագրութիւնը, բազմաթիւ տասնեակ յօդուած, ուսումնասիրութիւն, գրական գրոյց, եւայլն:

Սիրելի է Սեւակ ոչ միայն իր բազմերանգ շնորհներուն համար որ ընդարձակած են մեր ազգային գրականութեան իշխանութիւնն ու բարձրացուցած հայ անուներ միջազգային գետիներուն վրայ, այլ եւ այն պատճառով՝ որ անգիջող, քաջ պաշտպան մըն է մեր ոսկեղնիկին ու հակառակորդ՝ զայն խաթարող, հայ հոգիին ու ոգիին, պատմութեան և ազգային նկարագիրը եղծանող բառերու գործածութեան կողմնակիցներուն:

Քաջահմուտ բառագէտ՝ Սեւակ կը ճանչնար մեր լեզուի համապարփակ կարելիութիւններն ու անսահման հարստութիւնը և կը պնդէր որ մեզի պարտագրուած բա-

Հ.Բ.Ը.Մ. ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

### ՅՈՒՇԵՐԵԿՈՅ՝

## Նուիրուած Պարոյր Սեւակի

ները- անհատի պաշտամունքի օրերէն... - ոչ մէկ առաւելութիւն ունին հայերէնին վրայ՝ իմաստի, գեղեցկութեան, հեշտալուր և ճկուն ըլլալու տեսակէտէն: Օտար բաները կ'աղձատեն, կ'աղքատացնեն մեր լեզուն, կը պղտորեն զայն: Պէտք է, հետեւաբար, հիւրընկալենք զանոնք:

Միեւնոյն ատեն՝ Սեւակ կը պնդէր որ բանանք մեր գրական լեզուի դոնորը՝ ժողովրդականին առջեւ: Կը ձգտէր գրական լեզուի դէպի ժողովրդայնութիւնը:

Անպա՛մ «Անլուելի զանգակատուն» երկին մէջ, Պարոյր Սեւակ անվերջ փնտռուածքի մէջ է, իբր ճշմարիտ արուեստագէտ: Նոր ուղիներու որոնումը, աւանդական և դասական ապահով ձեւերէ հրաժարիլը կ'արժեւորեն իր գործը:

Սեւակ անխնայ կը հարուածէ, երգիծանքի զգեստ հագած՝ չարն ու վատը, որոնք արգելք կ'ըլլան մարդը ազնուացնող ուժերուն:

Մեզի լուի հաճելի ըլլալ է հեզնանքի ու ծաղրի իր նպատակն, այլ դաստիարակել, բարձրացնել մարդը: Ինք կ'ատէ անոնք որ դաւանանքը կը վերածեն դաւի՛ասոր անոր հետ մանր ու ճղճիմ հաշիւներ մաքրելու վատ նպատակով...:

Գրական իր գրոյցներէն մէկուն ընթացքին -աւա՛ղ վերջինը-, Պ. Սեւակ շատ հետաքրքրական և ուսանելի գիտողութիւններ կ'ընէ բանարուեստի մասին: Այդ խօսքերը խտացած՝ տեսակ մը Կտակ են նոր գրողներու որպէսզի ճի՛շդ կերպով հունաւորեն ստեղծագործական իրենց ջանքն ու տաղանդը, լաւ և խորապէ՛ս ճանչնան մեր մայրենին ու քնան ժողովրդային:

Բոլոր գրողներու անունով Սեւակ կը խօսի ի՛ր բերնով, կը պատմէ իր կենսագրութիւնը՝ որ կենսագրութիւնն է մեր հասարակութեան, դարաշրջանին:

Սեւակի համար՝ բանաստեղծի մը ինքնատիպութիւնը պէտք է փնտռենք ամէն բանէ առաջ անոր պատկերաւոր մտածողութեան մէջ:

Եւ պարզ, նախնական սահմանում մ'ունի բանաստեղծութեան՝ որ ուրիշ բան է քան մեր ճանչցած «ՅՈՒՅ»ը...: Խոր-

Կիրակի, 15 Օգոստոս 1971ին, Աղեքսանդրիոյ Հ.Բ.Ը.Մ. Միութեան վարչութիւնը գաղափարը ունեցաւ յուշ երեկոյ մը նուիրել վաղամեռիկ բանաստեղծ՝ Պարոյր Սեւակին, Միութեան հաւաքավայրին մէջ:

Վարչութեան Ատենապետ՝ Տոքթ. Կարապետ Անտուրեան նախքան յայտագրի գործադրութեան, խնդրեց ներկաներէն մէկ վայրկեան լռութիւն՝ ի յարգանս հանգուցեալին ու անոր կողակցին՝ Տիկ. Նելլիին:

Կարդալէ ետք հայրենաշունչ «Հայաստան» խորիմաստ քերթուածը, օրուան հանգիսավար Ատենապետը արտայայտուեցաւ ողբ. Պարոյր Սեւակի մահուամբ՝ հայ ազգին ունեցած անփոխարինելի կորուստին մասին:

Ապա տեղի ունեցաւ գեղարուեստա-

հուրդ կուտայ որ բանաստեղծները գրեն անյագ, գրեն առանց չտփի ու առանց կշռոյթի և ինչպէս որ կ'ուզեն, միայն սա՛ պայմանով. թող ԲԱՆ մը ըսեն և իրենց ըսածը թող ըլլայ ԹԱՐՄ և ՁԼԼԱՅ ՁՆՁԻ...:

\* \*

Պէտք է սիրենք Պարոյր Սեւակը, լա՛ւ ճանչնանք անսր ձգած ժառանգը, այն՝ որ մասով մը յանձնած է թուղթին...:

Այո, բուն, անագորոյն վախճան մը ունեցաւ Սեւակ: Գրական-գեղարուեստական իր կրակոտ կեանքը խորտակուեցաւ ակընթարթի մէջ:

Այժմ, կը հանգչի Սեւակ իր կողակցին հետ՝ գի՛րկը մայր Հողին:

Մասիաներու հալոյ ձիւնը իբր անսպառ արցունք թող յաւիտենապէս ցօղէ շիրիմ անոր՝ որուն Երգն Անլուելի պիտի ղօզանջէ Զանգակատան երկնային բարձունքէն՝ փառաւորելու համար հայուն հանձարն ու աւետելու աշխարհին՝ Առաւօտն Լուսոյ:

Հելիոպոլիս, 14-8-1971

կան պատշաճ յայտագիր մը ամբողջութեամբ նուիրուած մեծ հայրենասէրին, որուն ընթացքին Պր. Գէորգ Քիւփէլեան, խոր թախիժով կարգաց «Անլուելի զանգաւատուն»էն Ղօղանջ եղեռնականը, իսկ Պր. Բարսեղ Գարթալեան մեծ յաջողութեամբ կարողացաւ ապրեցնել նոյն գործէն «Ղօղանջ կոտորածին»ը: Օր. Սոնա Գալբաքճեան գուրգուրանքով արտասանեց «Մայրենի լեզու» քերթուածը, իսկ Օր. Նայիրի Օրջանեան կարգաց «Կանք, պիտի լինենք» ոտանաւորը: Յայտագրին մասնակցողները բոլորն ալ արժանացան ներկաներուն գնահատանքին:

Օրուան յարգելի խօսնակը բեմ հրաւիրեց ծանօթ մտաւորական, Ազգ. երեսփոխան Պր. Մկրտիչ (Անդրանիկ) Բէմպէճեանը:

Ներկայացուց վառվռուն յորդառատ խօսքով, խորաթափանց մտքով, կատակասէր և լրջախոհ ողբ. Պարոյր Սեւակը, վեր առնելով անոր ձգտումները մտասեւեռումները, զայն ալեկոծող հոգեկան ապրումները ու կարգալէ ետք մի քանի քերթուածական նմոյշներ յարգելի բանախօսը մաղթեց իր բանախօսութեան վերջաւորութեան, որ շատանան Պարոյր Սեւակի հատիկի պտուղները, բանաստեղծ բանասէր հայ մտաւորականութիւն մը փոխարինէ զինքը, որպէսզի հայ լեզուն ապրի:

Օրուան հանդիսավարը ջերմապէս շնորհաւորեց յարգելի բանախօսը ապա խնդրեց Արժ. Տ. Յուսիկ Բհնյ. Նշանեանէն որ պահպանիչով փակէ յայտագրի առաջին մասը:

Քսան վայրկեան դադարէ ետք, տեղի ունեցաւ հայկական սինեմայի ցուցադրութիւն քաղաքի Սովետական Մշակութային Կեդրոնի բարեացակամ կարգադրութեամբ:

Ջերմապէս կը շնորհաւորենք Ազգ. սանդրիոյ Հ.Բ.Ը. Միութեան ներկայ Վարչութիւնը, ինչպէս նաեւ օրուան բանախօս Պր. Մկրտիչ Բէմպէճեանի ու գեղարւեստական բաժնի բոլոր մասնակցողներուն:

Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵՆԷՆ ՆԵՐՍ  
ՊԱՐԳԵԻԱԻՈՐ ՄՐՅԱՆՔ

Վերջերս Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան Վարչութիւնն առիթը ընծայեց հայ երիտասարդութեան որ իր գաղափարներն արսայայտեց զանազան նիւթերու շուրջ:

Ուրբաթ, 16 Յուլիս 1971 կ. ե. ժամը 6.30ին, Միութեան գրասենակին մեջ, տեղի ունեցաւ ընդհանուր հարցումներու Պարզեաւոր Մրցակ մը, կարեւորագոյնքեանք Հ.Բ.Ը. Միութեան Երիտ. Մշակութային Մարմինը:

Սոյն մրցակի մասնակցեցան 28 երիտասարդ—երիտասարդուհիներ, որոնք անձնակալի գաղափարներով սուին իրենց տեսլիկները, սզգային, մշակութային ընկերային եւ այլ հարցերու շուրջ:

Արդար եւ իրաւացի գնուելու առընչութեամբ, Վարչութիւնն կարեւոր էր Գեահասից Յանձնախումբ մը յանձնին՝ Հոգչ. Տ. Ներսիս Ծ. Վրդ. Բապունեանի, Պր. Տիգրան Պապիկեանի, եւ Պր. Յակոբ Հանքիկեանի, որոնք նիշեր տարով ըրին իրենց գեահասակները:

\* \* \*

Հինգշաբթի, 17 Օգոստոս կ. ե. ժամը 8.30ին, Հ.Մ.Ը.Մ. — Կուպրի դաշին մեջ Միութիւնն պաղպաղակատեղան մը տարից ի պատիւ Պարզեաւոր Մրցակի մասնակցողներուն:

Ներկայ էին Կեդր. Վարչութեան Ասեմալակ՝ Պր. Յովհաննէս Բեհեւեան, Գահիրէի Մասնաժողովի Ասեմալակ՝ Պր. Հայկազուն Քիրֆանեան, Պարբերաբերթիս արտօնատեր Պր. Այ. Սարուխան, Նուարտեան Ազգ. Վարժարանի Տնօրէն Պր. Տիգրան Պապիկեան եւ կարգ մը վարչական անդամներ, աշխատակիցներ, ինչպէս նաեւ երկու երիտասարդութիւն մը:

Ի դիմաց երիտասարդացին, իր բացման խօսքով հանդիս եկաւ Պր. Աւետիս Մոյսիսեան, որ բացատրեց ի տես, այս հանդիպման շարժառիթը, իր երախտագիտութեան զգացումը արսայայտեց Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան Վարչութեան, Գեահասից Յանձնախումբի անդամներուն, ինչպէս նաեւ ներկայ հիւրերուն եւ բոլոր երկու ուսանողութեան:

Պր. Տիգրան Պապիկեան իրախոսեցով խօսք անուելու արսայայտեցաւ Հ.Բ.Ը. Միութեան իր այս գեղեցիկ ձեռնարկին շուրջ, ապա խօսեցաւ սուսալակներէն իր սպառնալիկներուն մասին: Իբրեւ արդիւնք իր ուսումնական

«Քննութեանց», ան ընթերցումներ կատարեց հարցումներուն վերաբերեալ ստացած ոչսպառա պատասխաններուն շուրջ:

Պր. Ալ. Սարուխանի իր կարգին հրահրուելով՝ զնահասանկի բառերով զովքը հիւսեց այսպիսի ձեռնարկներու անհրաժեշտութեան, որով Հ.Բ.Լ. Միութիւնը, առիթ կուտայ երիտասարդութեան օգտուելու զարգացումի այս կարեղութիւններէն, վասն այսպայ հայ մարդուն պատրաստութեան որուն իրագործման համար անկէ ոչ պարտի հետեւիլ օգտակար գրադարմի մը, արուեստի կամ գրականութեան գծով՝ լրձւելով շուրջ աշխատանքի: Ան իր խօսքը փակեց յայտնութիւն ու յարաստեւութիւն մտադրելով բոլորին:

Հուսկ ուրեմն. Գնահատիչ Յանձնախումբի, հետեւեալ մասնակցողները դասաորուած էին արժանանալու տրամադրուած պարգևներուն:

Առաջին մրցանակը ստացաւ 18տեանայ երիտասարդ՝ Պր. Վարուժան Գազանձեան, ստանալով գեղեցիկ ժանկոյց մը, իսկ երկրորդ պարգևին արժանացաւ Օր. Մայսա Պարսեան ստանալով ինքնահոս գրիչ մը, ապա երրորդ հանդիսացած էր Պր. Մարգարէ Արթիւնեան, ստանալով Պր. Մարոպ Գոլոյմանեանի Անգրեհեհ Հայերէն բառարանը որ սիրով տրամադրուած էր հեղինակը երկու օրինակ, առ ի ֆաշպերութիւն այս մրցանակի գաղափարին, որ բարձր զնահասուեցաւ ներկաներէն: Երկուսն ալ բառարան մը ստացաւ Պր. Վարուժան Գազանձեան, առ ի զնահասանկ իր ցուցարեւած նուիրումին, սոյն ձեռնարկին յայտնութեանը համար:

Երկուսն խօսք առին կարգ մը երիտասարդներ ու իրենց երախտագիտական խօսքերը ըրին Վարչութեանս այս գեղեցիկ ձեռնարկին կազմակերպութեան ստրկչութեանը:

Իր փակնակ խօսքով, Պր. Աւեսիս Մովսէսեան շնորհակալութեան խօսք ուղղեց Հ.Բ.Լ. Միութեան Վարչութեան, Գնահատիչ Յանձնախումբին, ներկայ հիւրերուն, ինչպէս նաեւ բոլոր երիտասարդութեան, յայտարարելով, որ յառաջիկային պիտի կազմակերպուի յիմարանական երեկոներ եւ հայերէն լեզուի դասընթացներ:

Կը մտադրեմք, որ սոյն մրցանակը չլրջայ վերջինը, եւ Հ.Բ.Լ. Միութիւնը ֆաշպերեհ նորահաս սերունդը, համոզուելով որ անոնք մօտ ասեակն ազգիս առաջնորդները պիտի դառնան:

ԱՊԱՀՈՒՆԻ

\* \*

Ստորեւ կուտանք առաջին հանգիսացող՝ Պր. Վարուժան Գազանձեանի հարցապատասխանը:

1— Ռ՞րն է այն հերոսը որ քո սրտիդ առանել կը խօսի եւ ինչո՞ւ:

1— Կասկած չկայ որ այն հերոսը որ իմ սրտիս առանել կը խօսի այն՝ որ կը գերադասէ իր անձէն աւելի իր հայրենիքը, զայն պատրաստականութիւն ցուցաբերել՝ իր կեանքը նուիրելու վասն հայրենեաց: Եւ ահա առանց երկմտութեան կրնանք բարձրաձայն գոչել այդ «տիպար» հերոսը Վարդան Մամիկոնեաննէ: Ան պարզապէս կրօնքին ու հայրենիքին համար նետուեցաւ պատերազմին դաշտը, մեռնելու ու նահատակուելու գիտակցութեամբ:

2— Բացատրե՛ «Հայրենասիրութիւն» բառին իմաստը:

2— Այս բառը կը տարբերի ամէն անձի ներաշխարհին մէջ: Իմ կարծիքովս հայրենասիրութիւն կը նշանակէ սէր՝ հանդէպ հայրենիքիս: Այս սէրը կրնանք ըսել կապ մըն է որ կը կապէ անձ մը իր հայրենիքին հետ:

Հայրենասիրութիւնը կայժ մըն է, որ ամէն անձի հոգիին մէջ կը գտնուի, սակայն այդ կայծը կրնայ մարիլ երբ ընտանեկան և ընկերական շրջանակները չեն քաջալերեր անոր, աւելի զօրացնելու ուստի կամաց-կամաց կը նուազի այդ կայծը և անձը կը դառնայ անտարբեր հանդէպ իր հայրենիքին:

3— Ի՞նչ է կրօնքին դերը մարդկութեան համար այսօր:

3— Նախ հասկնանք թէ ի՞նչ է կրօնքը: Եթէ հետեւինք կրօնքներու հաստատութեան, կը տեսնենք թէ պատճառը եղած է մարդ արարածին՝ իր չափազանց սէր ցուցաբերելուն դէպի աշխարհիկ կեանքը, նիւթը, դրամը: Եւ սակայն ինչպէս գիտենք կրօնքները գոյութիւն ունեցած են մարդուս առաջնորդելու համար դէպի ուրիշ աշխարհ մը՝ հոգեկան աշխարհ մը: Աշխարհ մը, ուր չկայ չարութիւն դէշութիւն, անձնասիրութիւն եւ այլն: Ուստի արտայտուելու համար թէ ինչ եղած է

կրօնքին դերը մարդկութեան համար, պէտք է հարցնենք, թէ արդեօք կրօնքը իր առաքելութեան մէջ յաջողեցա՞ւ, արդեօք մարդիկ գիրար կը սիրե՞ն այսօր, արդեօք կը գերադասե՞ն հողեկանը՝ մարդկայինէն։

Ըստիս կըսեմ թէ կրօնքներու յաջողութիւնը մեծ չէ եղած։ Փա՞ստ։ Այսօրւան մարդկործան պատերազմները, անձնական շահերու համար երկիրներ բռնագրաւելը, զիրար սպաննելը։ Ուրեմն պէտք է գիտնանք թէ որքան որ զօրաւոր է մարդ արարածը, իր մտքով ու գործով և պահանջն պէտք է գիտնանք թէ կայ աւելի զօրաւոր ուժ մը, ուժ մը որ ստեղծած է մարդ արարածը։

4— Ի՞նչ է հայ ժողովուրդին՝ հողային դատը։

4— Իրողութիւն մըն է որ Հայաստանին աշխարհային դիրքը պատճառ եղած է, որ հազարամեակ մը առաջ պարսկական յարձակումները մէկ կողմէն, բիւզանդական յարձակումները միւս կողմէն, ապա արաբական յարձակումները, և ի վերջոյ թուրքին բարբարոսութիւնները, մեր երկիրը բաժան բաժան ընկեալ։ Ու 1915 թուականին Հայաստանը կորսնցնէ իր սեփական հայկական հողերէն մասեր։

Այս է մեր հողային դատը։ Վերստին պահանջել թուրքին ձեռքին տակ գտնուող հայկական հողերը և զայն միացնել ներկայ Հայաստանին, կազմելու համար ամբողջական Հայաստան մը։ Կը կարծեմ թէ, ուշ կամ կանուխ պիտի գայ այդ օրը։

5— Ի՞նչ է տարբերութիւնը հին և նոր սերունդներու և և ի՞նչ պետք է ըլլան իրենց փոխ յարաբերութիւնները, ազգային կեանքէն ներս։

5— Ճշմարտութիւնը այն է, որ հին և նոր սերունդներուն միջեւ էական տարբերութիւն մը չկայ։ Սակայն հին սերունդը որ տարիքի բերմամբ, ձեռք ձգած է փորձառութեան պատկառելի պաշար մը, կուզէ ի գործ դնել զայն։ Իսկ նոր սերունդը կը սիրէ նոր ուղիներու հետեւիլ, զայն կը սիրէ կարծիքներ փոխանակել, միշտ նոր բան մը ստեղծել, և անա հոս կը ստեղծել շփոթութիւն մը մտածելակերպի։

Քալով, թէ ի՞նչ պէտք է ըլլան իրենց

փոխ յարաբերութիւնները ազգային կեանքէն ներս, կը կայանայ հետեւեալ կէտերուն վրայ։

ա. Հին սերունդը իր ձեռքը ունենալով զեկը, պէտք է երիտասարդին առիթ տայ գործելու։

բ. Հին սերունդը պէտք է հետաքրքրուի նոր սերունդին ամէն մէկ շարժումին, նախ քաջալերելով իր նորանոր յառաջդիմութիւններուն մէջ, ապա ցուցնելով իր առած սխալ քայլերը։

գ. Հին սերունդը պէտք է նոր սերունդին հոգիին մէջ առաւել եւս վառ պահէ հայրենասիրութիւնը, մայրենի լեզուն, սովորութիւնները։ Պէտք է կազմակերպէ հարցազրոյցներ և վիճաբանական երկոյններ, կամ գասախօսութիւններ, թույլ տալով համար երիտասարդին, իր աջակցութիւնը բերել անձնական կարծիքներով։ Այսպէս կարելի է օգտուի նոր սերունդը հին սերունդի փորձառութիւնէն։

6— Ի՞նչ է սերը Երիտասարդին համար։

6— Երիտասարդին համար սերը պէտք է ըլլայ վառելանիւթ մը, զինք զէպի յառաջ մղելու համար։ Օրինակ՝ հայրենիքին սերը իրեն կը մղէ հայրենիքին օգտակար ըլլալ, ընտանիքին սերը պիտի առաջնորդէ սպառազային ըլլալ տիպար մարդ մը։ Իսկ այն սերը, որ երիտասարդ մը կը կապէ հակառակ սեռի մը հետ, կասկած չկայ որ իր օգտակարութիւնները ունի կեանքի մէջ, եթէ չ'առնուի յետամնաց մտածելակերպով։

Այսպէս սերը կը կապէ երկու անձեր ու կը մղէ աւելի աշխատանքի ու աւելի լրջախոհութեան։

7— Ի՞նչ բան է կ'ախորժիս և ի՞նչ բան է կը խրոջիս ընկերային շրջանակիդ մէջ։

7— Ընկերային շրջանակիս մէջ կ'ախորժիմ այն եղբայրական ոգիէն զոր կը պարունակէ բաւական չափով յարգանք ու սէր իրարու հանդէպ։ Իսկ այն՝ որմէ չեմ ախորժիք ու կը խրոջիմ անկէ, դժբախտաբար այդ ալ անձի մը հայրենասիրական ոգիէն զերծ ըլլալն է։ Այսինքն, ոչ միայն չեն հետաքրքրուելիք ու չեն ընդունիր այսօրուան հայրենիքի վերելքը, այլ



արգահատանքով կը դիտեն երբ անձ մը կ'արտայայտուի այդ տեսակ հարցերու շուրջ:

8— Խնջ ե արուստը քո կարծիքովդ:

8— Իմ կարծիքովս արուեստը մարգու մը զգացումներուն բերեղացած արտաբերումն է: Կրնանք ըսել, գրող մը կը ներշնչուի դէպքէ մը, կը շօշափէ զայն այդ հարցը ու կ'աւելցնէ իր սեփական գրելու ոճը ու կը գրէ վէպ մը, կամ նկարիչ մը, որ կը գծէ նկար մը: Ան այդ նկարին մէջ կը զնէ իր ամբողջ զգացումները և անա այսպէս ոեւէ արուեստագէտ մը կը զնէ իր ներքին աշխարհը:

9— Ի՞նչ ե 20-րդ դարու մարդկութեան օգտալար ամենամեծ գիտը ես ինչո՞ւ:

9— Վստահարար ամենամեծ գիտը հիւլէին բաժանումն է և օգտագործումը յառաջ եկած ուժին, որովհետեւ երկրիս վրայ գտնուող ուժի ազդիւրները հետզհետէ սկսած են պակսիլ, մինչ արդիւնաբերութիւնը օրըստօրէ կ'աւելնայ: Ինչպէս կը տեսնենք հիւլէական ուժը պիտի փոխարինէ ցարդ գտնուող ուժերուն (քարիւղ, ածուխ եւ այլն), որովհետեւ ոչ միայն հսկայ է իր տարողութեամբ, այլ նաեւ ամենամաքուր աւ ամենազստահելի ուժն է:

10— «Է.Բ.Բ.Մ.» տալ ինքնաբաջիար տառին նշանակութիւնն ու իմաստը:

10— Իւրաքանչիւր տառի նշանակութիւնը հետեւեալն է.

Հայկական-Բարեգործական-Ընդհանուր-Միութիւն:

Գալով իմաստին, Հայկական կը նշանակէ հայ ազգին համար, հայ ուսանողին համար:

Բարեգործական կը նշանակէ, բարիք ընել. զոհողութեան ազդիւր:

Ընդհանուր կը նշանակէ, բոլոր հայ զանգուածին համար առանց խտրութեան:

Իսկ Միութիւն կը նշանակէ, կազմակերպուած, միութեամբ, այսինքն՝ ոչ անհատական ձեւով, այլ հաւաքական, որ ինչպէս կ'ըսէ Միութեան նշանաբանը՝ «ՄԻՈՒԹԻՆԸ ԶՕՐՈՒԹԻՆ Է»:

## ԿԱՐՏԻՆԱԼ ԱՂԱՃԱՆՆԵԱՆ ԿԱԻՃԱՆԱԾ

Մեծ եր կորուստը այն մեծ Եկեղեցականին, այն մեծ հայուն, պապական կղերականութեան ամենաժողովրդավան անձնաորութիւններէն միայն՝ Կարտինալ Գրիգոր Պետրոս Աղանանեանին, որ տեղի ունեցած է Հոռմիր մէջ, Կիրակի, 16 Մայիս 1971-ին, 75 տարեկան հասակին մէջ, յետ կարճատեւ ճիւղանկութեան, խոր սուգի մատնելով արար աշարհը:

Յուդարկանութեան տխուր արարութիւնը տեղի ունեցած է Ռեբբար, 21 Մայիս 1971-ին, Ս. Պետրոս Մայր Տանարին մէջ, ի ներկայութեան 26 Կարտինալներու, 27 դեսպաններու եւ 12 գործակալտարներու:

Արարողութիւնը կատարած է ավիթիկեցի մը՝ Պերնարտէն Կանթէն Սրբազանը՝ Քորոնոսի նախկին Առաջնորդն ու Միաբանութեան օգնական քարտուղարը: Պօղոս Զ.ի անուհով քողութիւնը շնորհած է Կարտինալ Ֆերնանտօ Զինթօն:

Արարողութիւնները տեղի ունեցած են լատիներէն լեզուով, Սիքիսթինեան մատուրի երգչախումբին մասնակցութեամբ՝ ղեկավարութեամբ Տօմինիքօ Պարթոյուջջի Սրբազանին, ու թողած էն Ս. Նիքոլայ Տը Թօլէնթինօ Եկեղեցիին մէջ:

Եգիպտոսի գաղութին այ ջե մուսցած յիշատակելու Կարտինալ Աղանանեանի յիշատակը: Կիրակի, 30 Մայիս, առաւօտեան ժամը 11.30-ին Գահիրէի Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցիին մէջ հոգեհանգրստեան Ս. պատարագ մատուցուած է գլխաւորութեամբ՝ Ղպտի Կաթողիկէ Պատրիարք Կարտինալ Սիտարոսի, ինչպէս նաեւ կրօնական համայնքներու ներկայութեամբ եւ շրջաններու բարձրաստիճան ներկայացուցիչներու:

Կարտինալ Աղանանեանի վախճանունովը հայ ժողովուրդն ու Հայ Կաթողիկէ Եկեղեցին կը կորսնցնեն վերջին ժամանակաշրջաններու իրենց արժանաւոր զաւակներէն մին:

Աստուած յախտեցական հանգիստ պարգեւէ Անոր:

# ՈՂԲ. ԳԼԽԱԴԻՐ ԹԱՇՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վերջերս իր մահկանացուն կնքեց երգպատահայ գաղութիս տիպար մայրերէն՝ Տիկ. Գլխագիր Թաշճեան (ծնեալ Խաչերեան):

Հանգուցեալը կողակիցն էր Գահիրէի Հ.Բ.Ը. Միութեան Տեղական Մասնաժողովի Վարչական անդամ և Պատկ. Թեմական Ժողովի անդամ, ծանօթ ազգային՝ Պր. Երուանդ Թաշճեանի:

Համոզուելով, որ Միութեանս նպատակը ընդմիջտ եղած է տկարին ու անկարին օգնել ու օժանդակել, և ահա Տիկ. Գլխագիր Թաշճեանն ու իր համայն ընտանիքը անդամակցած են Հ.Բ.Ը. Միութեան ու պարզեւատրուած են վեթերանութեան վկայականով:

Զինք ճանչցողներուն սրտերուն մէջ, բարեսիրտ ու ազնիւ հայունիի մը տպաւորութիւնը թողած էր և սակայն անբեկանելի վճիռը անշարժութեան մատնեց այդ

ջերմերանդ մայրը:

Ողբ. Գլխագիր Թաշճեան անաքինի իր բնաւորութեան առնթեր ունեցաւ նաեւ օրինակելի մօր մը յատկանշելը, որ կըրցաւ դաստիարակել ու պատրաստել իր զաւակները նոյն այդ ուղիով, որոնք բոլորն ալ այսօր կազմած են հայ տիպար ընտանիքներ ու կը շարունակեն նոյն ուղիով և զգացումով դաստիարակել իրենց զաւակները:

Այո՛, մեռաւ Տիկ. Գլխագիր Թաշճեան և սակայն կ'ապրի ու յաւէտ պիտի ապրի ան մեր հոգիներէն ներս, իր մեծ գոհողութիւններուն և անջնջելի յիշատակներուն շնորհիւ:

Թող հոգիդ խաղաղութիւն գտնէ և ցուրտ հողը թեթեւ գայ աճիւններուդ: Երկնային միթիթարութիւն ողբացելի բոլոր հարազատներուն: Ա. Մ.

## ՀՐԱԻԻՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը այսօր կը հրահրէ Միութեան բոլոր իրաւաստ անդամները ներկայ գտնուելու 58րդ Ընդհ. Ժողովին, որ պիտի գումարուի ՇԱԲԱԹ, 6 ՆՈՅՆՄԱՅԻՍ 1971, սուսուտեան ժամը 9.30ին, Առաջնորդարանի Կիւլլապի Կիւլպեկեան Մշակութային Կեդրոնի Գավուրեան Սրահին մէջ, 630 Սերբնտ Էվրնիս, Նիս Եորք, Ն. Ե., ԱՄՆ:

Ներկայս 58րդ Ընդհ. Ժողովին համար տրուած միակ հրահրագիրն է: Կը խնդրենք հետեւաբար Միութեան յարգոյ իրաւաստ անդամներէն, որ անձնապէս ժողովին ներկայ ըլլան վերոյիշեալ բուսականին եւ կամ ամենէն ուրջ մինչեւ 15 Հոկտեմբեր 1971, իրենց փոխանորդազբերը յանձնեն Հ.Բ.Ը. Միութեան Ընդհանուր Տնօրէնին, Նիս Եորքի գրասենեակի հասցէին:

### ՕՐԱԿԱՐԳ

- 1 Ներկայացում եւ վաւերացում 1970 տարեշրջանի Ընդհանուր Տեղեկագրի:
- 2 Ներկայացում եւ վաւերացում 1970 տարեշրջանի ընդհանուր հաշուետուութեան:
- 3 Մասնակի ընտրութիւն Կեդր. Վարչ. Ժողովի:
- 4 Մասնակի ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի:
- 5 Առաջարկներ եւ բեյադրութիւններ:
- 6 Գնահատանքի բանաձեւեր:

Ի ԳԻՄԱՑ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Ատենադպիր  
Ր. Ք. ԿՐԵԿԸՐԻ

Ատենապետ  
Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

# Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՄՈՒԼԸ

## ՅՈՒՇԱՐԱՐ - ՄԻՈՒԹԻՒՆ

Պատճառաբեր Հ. Բ. Ը. Միութեան  
Հիմնադիր՝ Պողոս փառա Նուպար

## HOOSHARAR - Անգլիերէն Հրասարակութիւն

Հասցէ. — Armenian General Benevolent Union  
109, East 40th Street  
New - York N. Y. 10016.

## ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐ

Հրասարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Եւրոպայի  
Շրջանակային Կեդրոնական Յանձնաժողովի.  
Հասցէ. — 11, Square Alboni Paris 16<sup>me</sup> FRANCE

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հրասարակութիւն Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան  
Հասցէ. — 15, Էմաս Էլ Տիւն փողոց — Գահիրէ  
Փոստակ 717

## ԽՕՍՆԱԿ

Պատճառաբեր Հ. Բ. Ը. Միութեան Լիբանանի  
Շրջանակային Յանձնաժողովի  
Հասցէ. — Նամակասուփ 715, Պէյրութ.

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ — ԳԱՆԻՐԷ

Պահիրէի Հ. Բ. Ը. Միութիւնը հանոյրն ունի տեղեկացնելու պատուարժան հանրութեան թէ, իր հիմնած

### Ե Ա Գ Ո Ւ Պ Ա Ր Թ Ի Ն

գրադարանը որ կը գործէ 1958էն ի վեր, իր տրամադրութեան տակ ունի գրական, պատմական, գեղարուեստական, կրօնական եւ բանասիրական. ինչպէս նաեւ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ գիրքերու նոյն հասարածոյ, որմէ կրնան օգտուիլ մեր ընթերցասէր անդամները եւ Պահիրէի հայութիւնը անխտիր, առանց որեւէ վնասումի:

Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Ի Ն



### Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ Ն Վ ն ա ռ ո լ ի չ է

Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուէրներ, մեր այս ձեռնարկը աւելի նոյն եւ շահեկան ընծայելու համար:

— Ասանալու համար դիմել խմբագրութեանս,  
15, Էմաս էլ Տին փողոց Ա. յարկ — Պահիրէ



رقم الايداع بدار الكتب ٦١٣

ՅԳ. «ԱՐԳՈՍ» ԳԱՆԻՐԷ — ԼԵՌ. 56864